# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ



2013



## Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ, գեներալ-լեյտենանտ Վլադիմիր Սերգեյի Գասպարյանի ՈՒՂԵՐՁԸ

*ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչության կազմավորման 10-րդ տարեդարձի առթիվ շնորհավորում եմ ծառայության անձնակազմին և վետերաններին, մաղթում արդյունավետ աշխատանք ու հաջողություններ՝ նոր ոստիկանության ու նոր ոստիկանի ձևավորման գործում:*

*Ներքին անվտանգության ծառայության գերխնդիրը՝ ոստիկանական համակարգում կարգապահության ամրապնդումը, իրավախախտումների կանխարգելումը և պայքար արատավոր երևույթների դեմ, բովանդակային նոր շունչ ու արժեք ունի հատկապես այսօր, երբ ոստիկանությունն արմատական բարեփոխումների կարևորագույն փուլում է:*

Ոստիկանության գործն, այո՛, ծառայությունն է հասարակությանը, սակայն իրապես կարող է ծառայել միայն իր կոչումը հարգող, ազնիվ, պրոֆեսիոնալ պատրաստվածություն ունեցող, նույն հասարակության հավատն ու վստահությունը վայելող ոստիկանը: Մեր ոստիկանական ընտանիքում, որի գերակշիռ մասը հենց այդպիսի նվիրյալներն են, ցավոք, դեռևս հանդիպում են հակառակի օրինակներ, և ներքին անվտանգության վարչության խնդիրը համակարգը խորթ ու անհարիր անձանցից ու երևույթներից պաշտպանելն է, որոնց ցորենից զատելն է, որպեսզի չնվազեցնի բարու, ուժեղի, արդարագործի կենսատարածքը:

Ինքնամաքրման գործընթացը կենսական նշանակություն ունի ոստիկանության համար, և դուք՝ ներքին անվտանգության ծառայողներդ եք այդ գործի կարևորագույն պատասխանատուն, գործ, որը միշտ էլ ջանադրորեն ու պրոֆեսիոնալ եք կատարել, նաև՝ ճշմարտությունը, արդարությունը, ծառայակցի իրավունքներն ու արժանապատվությունը պաշտպանելու հաստատակամությամբ:

Արդարամտություն, անկողմնակալություն, սկզբունքայնություն՝ ահա անվտանգության ծառայության գլխավոր սկզբունքները, որ կյանքի են կոչվել տասնամյա գործունեության ընթացքում և գործելու են այսուհետ էլ՝ հանուն մեր ընդհանուր գործի հաջողության, նոր ոստիկանության կայացման, հասարակության ու երկրի բարօրության:

Կրկին շնորհավորում եմ հոբելյանական տարեդարձի առթիվ և մաղթում շիտակ ու հավատավոր ընթացք այդ ճանապարհով:

Աստված ձեզ պահապան:

Գեներալ-լեյտենանտ՝ Վ.Մ. Գասպարյան

20 հունվարի 2013թ.



*ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչության պետ, ոստիկանության գնդապետ*
***Արմեն Վաչիկի Հակոբյան***

*Ա.Վ.Հակոբյանը ծնվել է 1974 թ-ի մարտի 7-ին, Երևան քաղաքում: 1996 թ-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:*

*1996-98թթ. ծառայել է ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության վարչության քննչական բաժնում:*

*1999-2007թթ. աշխատել է ՀՀ զինվորական դատախազությունում՝ ՀԿԳ քննիչի պաշտոնում:*

*2007-2008թթ. զբաղեցրել է ՀՀ ՊՆ քննչական վարչության պետի տեղակալ-Ստեփանակերտի քննչական բաժնի պետի պաշտոնը:*

*2008-2011թթ. աշխատել է ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչի պաշտոնում, այնուհետև՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի վարչական ապարատում:*

*2011թ. նոյեմբերի 7-ին նշանակվել է ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչության պետի պաշտոնում:*

*Գնդապետ Ա.Վ.Հակոբյանը ծառայության ընթացքում բազմիցս խրախուսվել է ՀՀ Պաշտպանության նախարարի, ՀՀ Գլխավոր դատախազի, ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի, ՀՀ ոստիկանության պետի և ՌԴ ՆԳ նախարարի կողմից:*

*Ամուսնացած է, ունի 2 երեխա:*

## Պարոնայք գեներալներ, սպաներ և շարքայիններ, հարգելի գործընկերներ

Գաղտնիք չէ, որ բոլոր ժամանակներում, ինչպես իրավապահ մարմիններից յուրաքանչյուրում, ոստիկանության համակարգում ևս եղել են և կան ծառայողներ, ովքեր փորձում են ոստիկանությունում ծառայությունն օգտագործել անձնական նպատակների և շահերի համար, ինչն էապես ստվերում է ոստիկանության տասնյակ հազարավոր աշխատակիցների պատիվն ու արժանապատվությունը, ովքեր անձնվիրաբար կատարում են իրենց ծառայողական պարտքը հանցավորության դեմ պայքարի դժվարին ու պատասխանատու գործում:

Ոստիկանության համակարգում /նախկինում ՀՍՍՀ և Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարություններ/ ներքին անվտանգության գործառույթ իրականացնող ստորաբաժանման ստեղծման անհրաժեշտությունն առաջացել է դեռևս 1920-ական թվականներին, ինչը թելադրված էր ոստիկանության մարմինների կայուն գործունեության ապահովման պահանջներով:

Կազմավորման օրից՝ ժամանակ առ ժամանակ, ներքին անվտանգության գործառույթ իրականացնող ստորաբաժանումը գործել է ոստիկանության այլ կառույցների կազմում կամ առանձին:

Ստորաբաժանումը տարբեր ժամանակահատվածներում ղեկավարել են 3-րդ հանրապետության իրավապահ համակրգում հայտնի ու վաստակաշատ մի շարք անվանի ոստիկաններ, ինչպիսիք են գեներալ-մայոր Ռուդիկ Սուրենի Հովակիմյանը, գնդապետներ Համայակ Գալուստի Նավասարդյանը, Կարեն Սուրենի Մեհրաբյանը, Սերգեյ Հայկազի Շահինյանը, ովքեր իրենց անուրանալի ավանդն են ներդրել համակարգում արատավոր երևույթների դեմ պայքարի գործում:

2003 թվականի հունվարի 20-ին, ի կատարումն «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջի, ՀՀ ոստիկանության պետի թիվ 15-Ա հրամանով ոստիկանության կառուցվածքում ստեղծվեց ներքին անվտանգության վարչությունը՝ ՆԱՎ: Հենց այդ ամսաթիվն է համարվում ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչության ստեղծման օրը և այսօր նշում ենք տասնամյա հոբելյանը:

Ներքին անվտանգության վարչությունը հանդիսանում է ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի ինքնուրույն վարչություն, որն իր լիազորություններն իրականացնում է ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, «Ոստիկանության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին», «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքներով, «ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչության կանոնադրությամբ», ոստիկանության պետի հրամաններով և այլ իրավական ակտերով:

*ՆԱ վարչությունը գտնվում է ՀՀ ոստիկանության պետի անմիջական ենթակայության տակ, ինչով էլ պայմանավորված են վարչության գործունեության ու անձնակազմի նկատմամբ դրսևորվող խստապահանջությունը և մշտական ուշադրությունն ու հոգատարությունը:*

*ՀՀ ոստիկանության համակարգում իրականացվող բարեփոխումների շրջանակներում 2011-2012 թվականների ընթացքում կադրային և կառուցվածքային մի շարք փոփոխություններ են կատարվել նաև ներքին անվտանգության վարչությունում՝ ոստիկանության հանդեպ հասարակության հավատի ու վստահության վերականգնման և ոստիկանի նոր կերպարի ձևավորմանն ուղղված ՀՀ ոստիկանության ղեկավարության որդեգրած ռազմավարությունն ի կատար ածելու նպատակով: Էապես թարմացվել է վարչության նյութատեխնիկական բազան, վերանորոգվել ու բարելավվել են աշխատանքային պայմանները:*

*Փոխվել է ոստիկանության համակարգում ծառայողական կարգապահության ամրապնդման ու իրավախախտումների կանխարգելման աշխատանքներն իրականացնելու քաղաքականությունը՝ նպատակ ունենալով առավել արդյունավետ դարձնել համակարգում արատավոր երևույթների դեմ պայքարը, որն այսօր առաջնային գերխնդիր է և այն պետք է իրագործվի:*

*Այստեղ պետք է ընդգծվի, որ արատավոր երևույթների դեմ պայքարում չեն անտեսվում ոստիկանության ծառայողների իրավունքները և արժանապատվությունը: Հենց այս նպատակն է հետապնդում ՀՀ ոստիկանության պետի ուղղակի պահանջը. դեմքով շրջվել դեպի ծառայողը, հարգել նրա արժանապատվությունը, բացառել ոստիկանության ծառայողի իրավունքների ոտնահարումը և նպաստել անհիմն կերպով կարգապահական պատասխանատվության ենթարկված ծառայողի հեղինակության վերականգնմանը:*

*Կարծում եմ, որ ստորև բերվող աղյուսակն ինքնին հաստատում է նշվածը.*

| | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 |
|---|---|---|---|---|---|
| Կատարվել են ծառայողական քննություններ | 185 | 173 | 157 | 459 | 571 |
| Ենթարկվել են կարգապահական տույժերի | 127 | 81 | 71 | 156 | 175 |
| Ազատվել են ոստիկանությունում | 37 | 17 | 17 | 61 | 43 |




*Իրականացված ծառայողական քննությունների և ուսումնասիրությունների, ինչպես նաև առանձին դեպքերում ՀՀ ոստիկանության պետի ուղղակի հանձնարարությամբ կատարված ստուգումների արդյունքում 2012 թվականի ընթացքում 10-ից ավելի ծառայողներ՝ քննիչներ, օպերլիազորներ, ՃՈ տեսուչներ, ՊՊԾ ոստիկաններ խրախուսման են ներկայացվել՝ իրենց պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար: Փաստն աննախադեպ է, քանի որ նախկին տարիներին նման պրակտիկա չի եղել: Ի թիվս մի շարք օրենսդրական փոփոխությունների առաջարկների՝ ՀՀ ոստիկանության պետի համաձայնությամբ ՆԱ վարչությունում մշակվել և քննարկման է ներկայացվել օրենքների փոփոխության նախագիծ, որի ընդունման դեպքում էապես կամրապնդվի ոստիկանների պաշտպանվածությունը: Խոսքը վերաբերվում է անզգույշ հանցագործությունների դեպքում դատապարտումից հետո երկարամյա անբասիր ծառայություն անցած ոստիկանության ծառայողին համակարգից չազատելու հնարավորությանը:*

*ՀՀ ոստիկանության ՆԱ վարչությունը սերտորեն համագործակցել և համագործակցում է ՀՀ ոստիկանության բոլոր ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների մյուս իրավապահ մարմինների հետ: Պատրաստակամ ենք համագործակցություն ծավալել բոլորի հետ՝ քաղաքացիներ, հասարակական և իրավապաշտպան կազմակերպություններ, ոստիկանության ծառայողներ, ովքեր իրապես շահագրգիռ են ոստիկանության համակարգում արատա-*

*վոր երևույթների դեմ պայքարում և ցանկանում են. «ՕՐԵՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ, ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱՎԱԿԱՐԳԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ»:*

*Վերը շարադրվածի ամենավառ ապացույցն են ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքէջում ներքին անվտանգության ենթաբաժնում տեղադրված դիմում-բողոքների անմիջական փոխանցման հնարավորությամբ հղումները, հաճախակի կազմակերպվող <ուղիղ կապ> միջոցառումները, քաղաքացիների մշտական ընդունելությունները,ինչպես նաև նրանց կողմից ստացվող շնորհակալական նամակները՝ այդ թվում նաև մամուլի հրապարակումների միջոցով:*

*ՆԱ վարչությունը բաղկացած է 3 բաժիններից՝ ծառայողական քննությունների, օպերատիվ ապահովման, հաշվառման ու վերլուծության:*

*Ինչպես արդեն նշվեց վարչությունը գտնվում է ՀՀ ոստիկանության պետի անմիջական ենթակայության տակ, ինչով էլ հիմնականում պայմանավորված է անձնակազմի նկատմամբ դրսևորվող խստապահանջությունը և ուշադրությունը: 2011-2012 թվականների ընթացքում վարչության անձնակազմն արժանացել է բազմաթիվ խրախուսանքների: Նույն ժամանակահատվածում ՆԱ վարչության մի շարք ծառայողներ առաջխաղացումներով տեղափոխվել են ոստիկանության այլ ստորաբաժանումներ:*

*Միայն 2012 թվականի գործունեության ամփոփման արդյունքներով ՀՀ ոստիկանության պետի 2013 թվականի հունվարի 14-ի թիվ 48-Ա հրամանով 6 հոգի պարգևատրվել են:*

*Ցանկանում եմ մեկ անգամ ևս դիմել ոստիկանության բոլոր ծառայողներին, մեծ և փոքր ստորաբաժանումների ղեկավարներին.*

- *պաշտպանված է այն ոստիկանը, ով գիտի իր իրավունքներն ու պարտականությունները,*
- *արատավոր երևույթների վերացման ամենակարճ ու արդյունավետ միջոցը մեկն է. ոստիկանը պետք է ճիշտ, ժամանակին և օբյեկտիվ կատարի իր ֆունկցիոնալ պարտականությունները:*

*Վստահ եմ, որ Ձեզանից յուրաքանչյուրի կողմից իր ստորաբաժանումում այս ուղղությամբ կատարված ամեն մի դրական քայլ թույլ կտա ի կատար ածել ՀՀ ոստիկանության ղեկավարության որդեգրած ռազմավարությունը. ոստիկանության հանդեպ հասարակության հավատի ու վստահության վերականգնում, ոստիկանի նոր կերպարի ձևավորում:*

***ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչության պետ, ոստիկանության գնդապետ՝***

***Ա.Վ.ՀԱԿՈԲՅԱՆ***

***20 հունվարի 2013թ***

# Ներքին անվտանգության վարչության ղեկավար կազմը



*Ձախից աջ*

Ալեքսանդր Աղամյան - ԾՔ բաժնի պետի տեղակալ

Արտոմ Պողոսյան - ՀՎ բաժնի պետ

Վարդան Հարությունյան - ԾՔ բաժնի պետ

Արմեն Հակոբյան - վարչության պետ

Անդրանիկ Ավագյան - ՕԱ բաժնի պետ

Հակոբ Հովնանյան - ՕԱ բաժնի պետի տեղակալ

Գոհար Բոզինյան - ՀՎ բաժնի պետի տեղակալ



*ՆԱ վարչության պետի տեղակալ, ծառայողական քննությունների բաժնի պետ, ոստիկանության գնդապետ*
***Վարդան Նորիկի Հարությունյան***

*Վ.Ն.Հարությունյանը ծնվել է 1967 թվականի հունիսի 2-ին Երևան քաղաքում:*

*1994 թ. ավարտել է Երևանի Պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:*

*1991 թ-ից ծառայում է ՀՀ ոստիկանության համակարգում:*

*Ներքին անվտանգության վարչությունում ծառայում է 2008 թ-ից, վարչության պետի տեղակալի պաշտոնում նշանակվել է 2011 թ-ի նոյեմբերին:*

*Գնդապետ Վարդան Հարությունյանը ծառայության ընթացքում բազմիցս խրախուսվել է ղեկավարության կողմից, ՀՀ Նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:*

*1991-1992թթ. ակտիվ մասնակցություն է ունեցել ինքնապաշտպանության մարտական գործողություններին:*

*Ամուսնացած է, ունի 2 երեխա:*

# Ներքին անվտանգության վարչության ծառայողական քննությունների բաժին



Ձախից աջ՝

Արթուր Բդոյան, Սերգեյ Պեպանյան, Արմեն Թադևոսյան, Ալեքսանդր Ադամյան, Վարդան Հարությունյան, Արմեն Մկրտչյան, Արսեն Ավետիսյան, Թագուհի Յականյան, Մարտիրոս Նահապետյան, Էդգար Այդինյան



*ՆԱ վարչության պետի տեղակալ, օպերատիվ ապահովման բաժնի պետ, ոստիկանության գնդապետ*
***Անդրանիկ Միշիկի Ավագյան***

*Ա.Մ.Ավագյանը ծնվել է 1967թ. հունիսի 15-ին Ախուրյանի շրջանում: 1991թ. ավարտել է Ֆիզիկական Կուլտուրայի Հայկական պետական ինստիտուտը:*

*1994թ-ից ծառայում է ՀՀ ոստիկանության համակարգում, զբաղեցրել է մի շարք պատասխանատու պաշտոններ:*

*Ներքին անվտանգության վարչությունում ծառայում է 2012թ-ի հունվարից, վարչության պետի տեղակալի պաշտոնում նշանակվել է սեպտեմբերի 20-ին:*

*Գնդապետ Ա.Ավագյանը բազմիցս խրախուսվել է ոստիկանության ղեկավարության կողմից:*

*Ամուսնացած է, ունի 2 երեխա:*

# Ներքին անվտանգության վարչության օպերատիվ ապահովման բաժին




*Ձախից աջ՝*

*Արտյոմ Պողոսյան, Լուսինե Խաչատրյան,*

*Գեղամ Վարդանյան, Ադամ Մանուչարյան,*

*Կարեն Պապիկյան, Արթուր Սահակյան,*

*Անդրանիկ Ավագյան, Ռուբեն Խալապյան,*

*Հակոբ Հովսեփյան*



*ՆԱ վարչության հաշվառման և վերլուծության*
*բաժնի պետ, ոստիկանության գնդապետ*
***Արտոմ Ժորժիկի Պողոսյան***

*Ա.Ժ.Պողոսյանը ծնվել է 1956թ. հունիսի 20-ին Երևան քաղաքում: 1985թ. ավարտել է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը:*

*1995թ-ից ծառայում է ՀՀ ոստիկանության համակարգում, իսկ ՆԱ վարչությունում՝ 2002թ-ից:*

*Ներքին անվտանգության վարչության ՀՎ բաժնի պետի պաշտոնում նշանակվել է 2012թ. նոյեմբերի 20-ին:*

*Ա.Պողոսյանը միջազգային կարգի սպորտի վարպետ է, ոստիկանության ղեկավարության կողմից բազմիցս արժանացել է խրախուսանքների:*

*Ամուսնացած է, ունի 3 երեխա:*

# Ներքին անվտանգության վարչության հաշվառման և վերլուծության բաժին



Ձախից աջ՝

Սուսաննա Մարտիրոսյան

Արմինե Վարդանյան

Ռադմիլա Աբաջյան

Լուսինե Պողոսյան

Արոմ Պողոսյան

Գոհար Բոզինյան

Մերի Մելքումյան

## Ծառայության
## նախկին ղեկավարները



Յուրի Կասպարի
Մեդնիկյան
*21.06.1954-31.03.1965 թթ*



Բենիկ Շահնազարի
Գևորգյան
*01.11.1965-24.11.1975 թթ*



Սերգեյ Նիկոլայի
Տեր-Հակոբյանց
*02.12.1975-30.11.1977 թթ*



Մուշեղ Մկրտիչի
Հովհաննիսյան
*30.12.1977-14.07.1983 թթ*



Արտավազդ Բոգդանի
Վանյան
*14.07.1983-30.07.1984 թթ*



Մարլես Շաքարի
Մարգարյան
*30.07.1984-17.10.1985 թթ*



/պետի պաշտոնակատար/
Հարություն Միշայի
Մարանջյան
*17.10.1985-07.02.1986 թթ*



Գրիշա Խաչատուրի
Մկրտչյան
*07.02.1986-27.08.1990 թթ*



Արամ Վարդգեսի
Տեր-Սահակյան
*12.12.1990-03.07.1992 թթ*

## Ծառայության նախկին ղեկավարները



Համայակ Գալուստի Նավասարդյան
*03.07.1992-10.08.1993 թթ*



Կարեն Սուրենի Մեհրաբյան
*10.08.1993-23.11.1995 թթ*



Ավետիս Ռուբենի Ավետիսյան
*23.11.1995-23.01.1998 թթ*



Սերգեյ Հայկազի Շահինյան
*29.01.1998-23.10.1999 թթ*



Ռուդիկ Սուրենի Հովակիմյան
*23.10.1999-12.03.2002 թթ*



Արարատ Ռազմիկի Գրիգորյան
*04.07.2002-08.07.2008 թթ*



Արտյոմ Ալեքսանդրի Բաբաջանյան
*08.07.2008-30.03.2011 թթ*



Արմեն Միհրանի Գարբուզյան
*30.03.2011-07.11.2011 թթ*

# Ներքին անվտանգության վարչության անձնակազմը

